ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար տվյալների տրամադրման ծառայություններ ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀՔԿԴ-ԳՀԾՁԲ-SS-18/1» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2017 թվականի դեկտեմբերի 22-ին կնքված N «ՀՀՔԿԴ-ԳՀԾՁԲ-SS-18/1.1» պայմանագրում 2018 թվականի հունվարի 26-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N 1: Պայմանագրով նախատեսվում էր, որ Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով:

Փոփոխության նկարագրություն: Համաձայնագրով հաստատվել է Պայմանագրի վճարման ժամանակացույցը:

Փոփոխության հիմնավորում: ՀՀ կառավարության 28 դեկտեմբերի 2017 թվականի N 1717-Ն որոշում:

Պատվիրատու՝ ***ՀՀ քննչական կոմիտե***

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

22.12.2017թ. կնքված N ՀՀՔԿԴ-ԳՀԾՁԲ-SS-18/1.1 պայմանագրի

Ք. Երևան << 26 >> հունվարի 2018թ.

ՀՀ քննչական կոմիտեն, ի դեմս դեպարտամենտի ղեկավար Ա. Զալինյանի, որը գործում է դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՄԵԴԻԱՄԱՔՍ ՄԵԴԻԱ ՔՈՄՓԱՆԻ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Թադևոսյանի, (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև կողմեր, հիմք ընդունելով կողմերի միջև 22.12.2017թ. կնքված N ՀՀՔԿԴ-ԳՀԾՁԲ-SS-18/1.1 պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 և 7.13 կետերը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1.Համաձայնագրի առարկան

Կողմերը որոշեցին.

1. Հաստատել Պայմանագրի վճարման ժամանակացույցը՝ համաձայն Համաձայնագրի Հավելված N 1-ի:
2. Ծառայության մատուցման ժամկետ սահմանել մինչև 15.12.2018թ:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Հավելված N 1 համարվում է համաձայնագրի անբաժանելի մասը:

3.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ քննչական կոմիտե ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն, Հ/Հ 900011000834 ՀՎՀՀ 02631263	«ՄԵԴԻԱՄԱՔՍ ՄԵԴԻԱ ՔՈՄՓԱՆԻ» ՍՊԸ ք. Երևան, Աբովյան 8, 2-րդ հարկ «Յունիբանկ» ԲԲԸ, Պրիվե մ/ճ Հ/Հ 24149000046000 ՀՎՀՀ 00144609 էլ. հասցեն՝ h.minasyan@mediamax.am
_____ (ստորագրություն) Կ.Տ	_____ (ստորագրություն) Կ.Տ

Հավելված 1
<<22>> դեկտեմբերի 2017թ. կնքված
N << ՀՀՔԿԴ-ԳՀԾՁԲ-SS-18/1.1>> ծածկագրով գնման պայմանագրի
26.01.2018թ. կնքված N 1 Համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	72311250/302	Տվյալների տրամադրման ծառայություն		84000	168000	252000	336000	420000	504000	588000	672000	756000	840000	1008000	1008000

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ քննչական կոմիտե
ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն,
Հ/Հ 900011000834
ՀՎՀՀ 02631263

_____
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«ՄԵԴԻԱՄԱՔՍ ՄԵԴԻԱ ՔՈՄՓԱՆԻ» ՍՊԸ
ք. Երևան, Աբովյան 8, 2-րդ հարկ
«Յունիբանկ» ԲԲԸ, Պրիվե մ/ճ
Հ/Հ 24149000046000
ՀՎՀՀ 00144609
էլ. հասցեն՝ h.minasyan@mediamax.am

_____
(ստորագրություն)
Կ.Տ